

**Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**  
**Երևանի պետական համալսարանի**  
**Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի**  
**2022 թ. դեկտեմբերի 22-ին կայացած թիվ 10 նիստի**

Գիտական խորհրդի 38 անդամներից հարցմանը մասնակցել են 30-ը:

**Օրակարգում՝**

1. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի 2022-2023 ուս. տարվա մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:
2. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Գևորգ Ավագի Ավագյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:
3. Կենսաֆիզիկայի ամբիոնի հայցորդ Սվետլանա Վահագնի Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

**ԼՍԵՑԻՆ՝** ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի 2022-2023 ուս. տարվա մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝** ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ղեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը: Ներկայացվեց կենսաբանության ֆակուլտետի 2022-2023 ուս. տարվա «Ընդհանուր և բժշկական կենսաքիմիա» (10 ուսանող), «Մանրէաբանություն և կենսատեխնոլոգիա» (7 ուսանող), «Կիրառական մանրէաբանություն» (4 ուսանող), «Բժշկական սնկաբանություն և կիրառական բուսաբանություն» (5 ուսանող), «Ընդհանուր և մոլեկուլային գենետիկա» (7 ուսանող), «Հիմնարար և կիրառական ֆիզիոլոգիա» (8 ուսանող) մագիստրոսական կրթական ծրագրերի ուսանողների թեզերի թեմաները և գիտական ղեկավարներին:

Ստորև ներկայացվում է մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողների թեզերի թեմաների և գիտական ղեկավարների ցուցակը:

**«Ընդհանուր և բժշկական կենսաքիմիա» կրթական ծրագիր**

1. Ազիզյան Մարիամ Գեղամի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Մ. Թ. Պետրոսյան  
Հազարատերևուկի կենսաբանորեն ակտիվ նյութերի որոշ  
առանձնահատկությունները
2. Աղաբաբյան Հեղուշ Մամվելի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ն. Կ. Հայրապետյան  
Օքսիդային սթրեսի գնահատումը պարկինսոնիզմի փորձարարական մոդելներում

3. Արաջյան Մարիամ Վահագնի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Է. Խ. Բարսեղյան  
Մի շարք գործոնների ազդեցությունը կաթնասունների արգինազ I-ի և II-ի  
պրոտեոլիզի նկատմամբ զգայունության վրա
4. Բենյամինովա Լիդիա Ռադիկի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Է. Խ. Բարսեղյան  
Պոլիպեպտիդների յուրահատուկ ինքնակազմակերպումն օլիգոմերային  
կառուցվածքների ձևով իզոֆունկցիոնալ ֆերմենտների օրինակով
5. Եղիկյան Ալվինա Արթուրի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ս. Վ. Մարության  
ԱԵՖ-ազային ակտիվության փոփոխությունը *Candida guilliermondii* NP-4  
խմորասնկերի հոմոգենատներում և միտոքոնդրիումներում ուլտրամանուշակագույն  
ճառագայթման ազդեցությամբ
6. Ջաքարյան Նազելի Հրաչի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Հ. Ս. Կարապետյան  
Ոչ իոնացնող ճառագայթների ազդեցությունը *C. guilliermondii* NP-4 խմորասնկերի  
հակաօքսիդանտային համակարգի վրա
7. Կուրդինյան Լիաննա Սուրենի - ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Գ. Հ. Սեմերջյան  
Հայաստանում տարածված մամուռների լուծամզվածքներից ստացված  
նանոմասնիկների հակամանրէային և հակասնկային ակտիվությունը
8. Հակոբյան Մարուսյա Սարմենի - ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Ն.Վ. Ավթանդիլյան  
Բուսական ծագման և քիմիաթերապևտիկ միացությունների համակցումների  
ազդեցությունը HER2 ռեցեպտորի գործունեության վրա՝ քաղցկեղի *in vitro* և *in vivo*  
փորձարարական մոդելներում
9. Մկրտչյան Ռուզաննա Արմենակի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ն.Կ. Հայրապետյան  
Գոջի հատապտուղը որպես օրգանիզմի հակաօքսիդանտային պաշտպանության  
գործոն
10. Մուրադյան Արեգնազ Միմոնի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ա.Ա. Աղաջանյան  
Բուսական լուծամզվածքի ազդեցությունն ածխաջրային և լիպիդային  
փոխանակության վրա իմոբիլիզացիոն սթրեսի ենթարկված ճագարների արյան  
շիճուկում

**«Մանրէաբանություն և կենսատեխնոլոգիա» կրթական ծրագիր**

1. Աղաբեկյան Հերմինե Արմենի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Մ. Թ. Պետրոսյան  
Վանաձորում աճող խաղողի (*Vitis vinifera*) տերևների կենսաբանորեն ակտիվ  
կոմպոնենտների որոշ առանձնահատկությունները
2. Գրիգորյան Լիլիթ Մարգարետունու - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ա.Ա. Մարգարյան  
Ախթալայի պոչամբարի ֆլորայի նմուշներից էնդոֆիտային մանրէների  
մեկուսացումը և դրանց մետաղակայունության ուսումնասիրումը
3. Հարությունյան Ազատ Արսենի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ա. Ա. Մարգարյան  
Լիճքվազ-թեյի ոսկու հանքավայրի նմուշներից մեկուսացված բակտերիաների ծանր  
մետաղների նկատմամբ կայունության մեխանիզմների ուսումնասիրումը
4. Հովհաննիսյան Սոնա Հակոբի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ա. Ա. Մարգարյան  
Մետաղակայուն մանրէների մետաղների իոնների կենսակուտակման ունակության  
ուսումնասիրումը
5. Հովսեփյան Լիլիթ Մանուկի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ի.Լ. Բագուկյան

Կենդանիների մսեղիքից անջատած *Staphylococcus* ցեղին պատկանող բակտերիաների հակաբիոտիկների նկատմամբ կայունությունը և կայունության գների տեղափոխման հնարավորությունը տրանսդուկցիայի միջոցով

6. Ռոստոմյան Անահիտ Վազգենի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ի. Լ. Բազուկյան  
Որոշ մետաղների իոնների և վիտամինների ազդեցությունն ուլտրամանուշակագույն և էլեկտրոնային փնջի ճառագայթման ենթարկված կաթնաթթվային բակտերիաների կայունության վրա
7. Միմոնյան Ռիմա Աշոտի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ի. Լ. Բազուկյան  
Հայաստանի կարիճների կենսաբանական հեղուկների բջջաթույնի ազդեցության մեխանիզմը

#### «Կիրառական մանրէաբանություն» կրթական ծրագիր

1. Բաղդասարյան Լիլիթ Սևակի - ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Կ. Ա. Թոչունյան  
Թթվային պայմաններում պրոտոնային ԱԵՖագի կենսաքիմիական և կենսաէներգետիկական որոշ ֆունկցիաների բնութագրումը *Escherichia coli* բակտերիաներում
2. Գալստյան Աննա Գևորգի - ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Կ. Ա. Թոչունյան  
*Escherichia coli*-ի հիդրոգենազ-1-ի և հիդրոգենազ-2-ի որոշ ենթամիավորների դերը թաղանթով կալիումի իոնների տեղափոխման և էներգիայի առաջացման գործընթացում՝ կախված գլյուկոզի կոնցենտրացիայից
3. Թաղևոսյան Լիլիթ Վահագնի - ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Ա. Ա. Փոլադյան  
Մետաղների նանոմասնիկների ազդեցությունը *Ralstonia eutropha*-ի և *Escherichia coli*-ի ջրածին օքսիդացնող ակտիվության վրա
4. Կուրդինյան Մոնիկա Գագիկի - ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Ս. Ն. Միրզոյան  
Մրգի և բանջարեղենի թափոնների խառը խմորումը և կենսաջրածնի արտադրությունը *Escherichia coli*-ում

#### «Բժշկական սնկաբանություն և կիրառական բուսաբանություն» կրթական ծրագիր

1. Գաբրիելյան Լուսինե Արշակի - ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆ. Ս. Գ. Նանագյուլյան  
Մարդու բերանի խոռոչի լորձաթաղանթի սնկային հիվանդությունները
2. Դադիյան Մարիամ Գագիկի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ի. Վ. Շահագիզյան  
Մարմարիկ գետի ավազանում հանդիպող դեղաբույսերի պարզ գեն միկոբիոտան
3. Մուրադյան Մարո Տարոնի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ի. Վ. Շահագիզյան  
Սնկադիմացկունության աստիճանի գնահատում սոսինձ-պաստառ մոդելային համակարգում
4. Ոսկանյան Ալիսա Սամվելի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ն. Հ. Զաքարյան  
*Orobanche kurdica* Boiss. & Hausskn. մակաբույծ տեսակի որոշ կենսաակտիվ միացությունների գնահատում
5. Սանասարյան Մարիամ Գուրգենի - ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆ. Ս. Գ. Նանագյուլյան  
Իջևան քաղաքի և շրջակայքի մակրոմիցետների բազմազանությունը և էկոլոգիական առանձնահատկությունները

#### «Ընդհանուր և մոլեկուլային գենետիկա» կրթական ծրագիր



1. Քալաշյան Լիլի Ավետիսի - ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ռ.Մ. Հարությունյան  
Տելոմերների հարաբերական երկարության և ALT/AST մակարդակների գնահատումը COVID-19 հիվանդների լեյկոցիտներում
2. Իզիթյան Հովհաննես Անդրանիկի - ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ռ.Մ. Հարությունյան  
Peptide Nucleic Acid (PNA) FISH գոնդը և դրա կիրառումը տելոմերների երկարության գնահատման համար
3. Շահինյան Մամիկոն Արթուրի - ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ռ.Մ. Հարությունյան  
Արտաբջջային միտոքոնդրիումային ԴՆԹ-ի վերլուծությունը արյան քաղցկեղային բջիջների կուլտուրայում ՊՇՌ մեթոդով
4. Միմոնյան Լարիսա Գասպարի - ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ռ.Մ. Հարությունյան  
Մեսիդինի և ացիկլովիրի ազդեցությունը տրանսկրիպցիայի վրա պրոկարիոտներում
5. Բարսեղյան Արևիկ Սամվելի - ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆ. Գ.Գ. Հովհաննիսյան  
Արտաբջջային ԴՆԹ-ն արական և իգական սեռերի COVID-19-ով հիվանդների արյան մեջ
6. Մկրտչյան Թագուհի Արտաշի - ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆ. Գ.Գ. Հովհաննիսյան  
Արտաբջջային ԴՆԹ-ն միջին և ծանր ընթացքով COVID-19-ով հիվանդների արյան մեջ
7. Թամրազյան Անի Դավիթի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Տ.Ա. Հարությունյան  
ԴՆԹ-ի վնասվածքների նվազեցում հակաօքսիդանտներով COVID-19-ով հիվանդների արյան բջիջներում

**«Հիմնարար և կիրառական ֆիզիոլոգիա» կրթական ծրագիր**

1. Շահբազյան Միլենա Գրիշայի - ղեկավար՝ կ.գ.թ, ասիստենտ Ա.Վ. Գրիգորյան  
Մկների լյարդի հիստոմորֆոլոգիական փոփոխությունների ուսումնասիրությունը Անդրկովկասյան գյուրգայի թույնի տարբեր բաղադրիչների ազդեցության պայմաններում
2. Սմբատյան Քրիստինե Օրբելու - ղեկավար՝ կ.գ.թ, դոցենտ Ն.Յու. Ադամյան  
Դեղաբույսի (*Trifolium pratense* L.) շտկող ազդեցությունը էկոլոգիական անբարենպաստ պայմաններում օրգանիզմում առաջացած ֆունկցիոնալ խանգարումների ժամանակ
3. Ռևազյան Աննա Սեյրանի - ղեկավար՝ կ.գ.թ, դոցենտ Ն.Յու. Ադամյան  
Ալոճենու ծաղիկների ազդեցությունը օրգանիզմի ինտեգրատիվ ազդանշանի վրա թթվածնաքաղցի ազդեցության դինամիկայում
4. Պողոսյան Սեդա Մուշեղի - ղեկավար՝ կ.գ.թ, դոցենտ Ա.Ֆ. Կարապետյան  
Արական անպտղություն ախտորոշմամբ տղամարդկանց սպերմատոգոնիդների ձևաբանական խաթարումների գնահատումը
5. Նազարյան Լիա Արմանի - ղեկավար՝ կ.գ.թ, դոցենտ Է.Ս. Գևորգյան  
Համակարգչային թեստավորման ընթացքում ուսանողների նպատակային գործունեության վեգետատիվ աջակցության անհատական առանձնահատկությունները

6. **Գևորգյան Արևիկ Երվանդի - ղեկավար՝ կ.գ.թ, դոցենտ Ա.Ֆ. Կարապետյան**  
Մկների գլխուղեղի հիստոմորֆոլոգիական փոփոխությունների ուսումնասիրությունը Անդրկովկասյան գյուրգայի թույնի տարբեր բաղադրիչների ազդեցության պայմաններում
7. **Գևորգյան Արուսյակ Սամվելի - ղեկավար՝ կ.գ.թ, ասիստենտ Ա.Վ. Գրիգորյան**  
Մկների սրտի հիստոմորֆոլոգիական փոփոխությունների ուսումնասիրությունը Անդրկովկասյան գյուրգայի թույնի տարբեր բաղադրիչների ազդեցության պայմաններում
8. **Սարգսյան Նահիրա Վաղինակի - ղեկավար՝ կ.գ.թ, դոցենտ Է.Ս. Գևորգյան**  
Քրքումի նյարդապաշտպանիչ ազդեցության ուսումնասիրությունը Պարկինսոնի հիվանդության պայմաններում

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** հաստատել ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի 2022-2023 ուս. տարվա մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողների թեզերի թեմաները և գիտական ղեկավարներին:

**ԼՍԵՑԻՆ՝** ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Գևորգ Ավագի Ավագյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝** Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ՝ կ.գ.թ., դոցենտ Ա.Ֆ. Կարապետյանը ներկայացրեց աշխատանքի արդիականությունը, ինչը պայմանավորված է հանրային առողջապահության կարևորագույն խնդիրներից մեկի՝ օձերի խայթոցներով թունավորումների դեմ պայքարի միջոցների պարզաբանմամբ և բազմակողմանի հետազոտման ուսումնասիրությամբ: Այդ հիմնախնդրի ուսումնասիրությունը միանգամայն անհրաժեշտ է նախազգուշական և բուժական միջոցառումների մշակման տեսական և կիրառական հիմքերի ստեղծման համար: Ղեկավարի կողմից ներկայացվեցին աշխատանքի նպատակը, հետազոտության իրականացման եղանակները, ակնկալվող արդյունքները: Նշվեց նաև, որ աշխատանքն իրականացվելու է ՀՀ ԳԱԱ Լ.Ա. Օրբելու անվան Ֆիզիոլոգիայի ինստիտուտի հետ համատեղ:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** հաստատել մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Գևորգ Ավագի Ավագյանի թեկնածուական ատենախոսության թեման «Առնետների որոշ ներքին օրգանների հյուսվածաբանական և ֆիզիոլոգիական փոփոխությունների գնահատումը Անդրկովկասյան գյուրգայի թույնի ազդեցության պայմաններում» վերտառությամբ, Գ.00.09 «Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա» մասնագիտությամբ, գիտական ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ա.Ֆ. Կարապետյան:

ԱՄԵՑԻՆ՝ Կենսաֆիզիկայի ամբիոնի հայցորդ՝ Սվետլանա Վահագնի Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ Կենսաֆիզիկայի ամբիոնի դոցենտ, գիտական ղեկավար կ.գ.դ., դոցենտ Մ.Ա. Փարսադանյանը ներկայացնելով աշխատանքի արդիականությունը, նպատակը և խնդիրները, հետազոտության իրականացման մեթոդները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել Սվետլանա Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեման «Տարաբնույթ լիզանդների փոխազդեցությունները մակրոմոլեկուլների հետ ԳԲՀ մմ տիրույթի ալիքների ազդեցության ներքո» վերտառությամբ Գ.00.02 «Կենսաֆիզիկա, կենսաինֆորմատիկա» մասնագիտությամբ, գիտական ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Մ.Ա. Փարսադանյան:

Գիտական խորհրդի նախագահ՝  
ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ.



Է.Ս. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար  
դոցենտ՝

Ի.Վ. Շահազիզյան

23.12.2022թ.